

Unquayute th.  
Anupuf quik-  
gump!

thn

N 23

1999

Ա. ԱԳԱՊԵԱՆ

ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ

Հրատարակութիւն

Տ. ՂՈՆԴԱԳԱՍՅԻ



(Արտատպած «Նոր-Դար» լրագրից)

ԹԻՖԼԻՍ

Տարածան Գ. Մարտիրոսեանցի

ՕՐԵՆԵՆ Փողոց Ձ. № 12

1890


Լ Ե ռ  
23

Ա. ԱԳԱՊԵԱՆ

# ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ

Հրատարակութիւն

Տ. ՂՈՆԿԱՂԱԷՋԻ



Գ Ր Ա Գ Ա Ր Ա Ն

(Երտառույած «Նոր-Գար» լրագրից)



ԹԻՖԼԻՍ

Տպարան Յ. Մարտիրոսեանցի

ՕՐԲԵՆԵՆԵՐ ՓՈՂՈՑ Տ. № 112

1890

# ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ

(Գլուղական կեանքից)

Дозволено Цензурою, 1 Сентября 1889 г. Тифлисъ.

Դեռ փոքր էի: Սրանից 14 տարի առաջ՝  
ամարալին արձակուրդներին՝ վերադարձալ զու-  
րենիք: Մի գեղեցիկ ամարալին առաջառ, բա-  
լականին վաղ, Ստեփանանց (գրայր) \*) տակ  
նստոտամ զրոյց էինք անուս Տեղանք զբողե-  
րի՝ կողմից Եզանանց Մուսին (Բաղիրանց) Եփ-  
րեմին առաջ արած բերում է: Մուսինի մի ու-  
սին մի պոչատ եղան կար, միւսին՝ չետը կա-  
պած \*\*) լիքը չուխաչ: Եփրեմը՝ բերան-մերանն  
արիւն լուիկ արած՝ Մուսինի առաջից անմուռն է

\*) Կոկալ—շուաքարան:

\*\*) Չուսի չետը կապած՝ չուսի չետին մասը,  
փեշերքը կապած: Ուրիշ բան չունենալու պատճա-  
ռով, գլուղացի տղայքը երբ խաղողի գոյ են գնում,  
չուսի փեշերքը թերով, ծախով կապում են ու մէջը  
խաղող ածում:

Типог. И. Мартиросянца, Орбел. ул., д. № 1/2

4 23-60

29 22

գլխակոր և առանց չուխի, ակամայ քայեր էր անուժ գէպի մեզ: Առաջին նաչելուց դժուար չէր իմանալ, որ Եփրեմը խաղողի գող էր Կնացել Մուսինի այգին, ուր վերջինս բռնելու ժամանակ իւր ուսի եղանի մի պողը կոտրել էր նրա վրայ: Բաց և այնպէս շարժուեց շատերի հետաքրքրութիւնը՝ ուղեցին իմանալ Եգանանց Մուսին, ինքը մի մենակ մարդ, ինչպէս է կարողացել Եփրեմին բռնել, որ ամբողջ գիւղին յայտնի էր, ինչպէս մի ճարպիկ և համարձակ գող, և որին շատերն են աշխատել իրենց այգիներում բռնել, բաց նրանցից ոչ ոքին չէ անողուել: Այն ինչ ինձ այլ բան էր հետաքրքրում: Աչքս բացած օրից երբէք տեսած չէի ես, որ գիւղում արդար դատաստան կտրուէր հարստի և քեասիբի, ուժեղի և թույլի մէջ. ես ծանօթ էի այնպիսի քստմնելի փաստերի, որոնք վաղուց արդէն շարժել էին իմ կատարութիւնս: Օրինակ՝ ինձ յայտնի էր, թէ ինչպէս Աւագանց Ակոփը Խոնթիւնանց քեասիբ Հանէսին ութ աբասու (1 ր. 60 կոպ.) համար, որ նրան շահով էր տուել, 8 տարի իւր դրանը պահեց՝ արածացնել տալով իւր տաւարներն ու էլի վերջն իւր ութ աբասին զիւղական դատաւորների ձեռքով ետ ստացաւ խեղճ հանէսից տոկոսով հանդերձ: Ա՛չ պակաս վրդոված և վր-

դովում էր ինձ հետեւեալ փաստը: Սաչինի Մուսին իւր եղբայր Ստեփանին նոքար է տալիս իւր մերձաւոր ազգական՝ պօրուչիկ Ուհանէս աղի մօտ: Եօթ տարի անշահ, անվարձ խեղճ Ստեփանն ամենայն հաւատարմութեամբ ճառայում է Ուհանէս աղի դրանը: Ոգորմելին մի օր էլ այդ տեղ վաչր է ընկնում՝ մեռնում: Ուհանէս աղէն, իւր կնոջից թաքուն, ննջեցեալի արևալուղի գըրպանում մի տասն ռուբլիանոց է դնում, որն, աղի կարծիքով, համարում է համ թաղմելայ, համ էլ վարձ Ստեփանի եօթնամեայ հաւատարիմ ճառայութեան. . .

Ստեփանին իւր եղբայր Մուսին թաղում է. չանցած երկու տարի նրա մահից, մեռնում է նոյն ինքը՝ Ուհանէս աղէն: Աղի մահից չետ նրա կին Թագաղիւ խանումը Սաչինի Մուսինին մի օր իւր մօտ է կանչում ու աչսպէս ասում. «՛՛ Մուս, ես լսել եմ, որ մեր դորմածիկ աղէն քու մեռած եղբօր ջիբը տասը մանէթ ա դրել. բա՛յամ, այն փողը հողու պարտքն ա՛ բեր, տո՛ւր»: Խեղճ Մուսինի սիրտը փորն է ընկնում. նա սկսում է աղաչել:

— «Խանձ ջան, քու աղի գերեզմանին բաղջի, չ՛ունեմ, ճրդեան տամ. ես որ ձեռիս տասը մանէթ ունենայի, բաս էլ ինչո՛ւ եմ քեասիբ...» — Յիմար-չիմար դուս մի՛ տալ, փող չու-

նես, բեր մուրհակ տու՝ թէ պարտ եմ»։ Խեղճ Սաչինի Մուսին անճարացած այդպէս էլ անուժ է։ Այնուհետև այդ տասը մանէթն սկսում է ճուտեր անել։ Մի յայտնի ժամանակամիջոցից յետ այդ ամենաչնչին գումարը դառնում է 50 ռուբլի. և մեր խեղճ Մուսին հազիւ միայն կարողանում է նրա շահը տալ, ուր մնաց հանգցնել նրան։ Այն ինչ մեր Թագին (Թագագիւլ խայնումը) պահանջներ է որ անում Սաչինի տղայ Մուսինից։ Քաջալ Թագին տասը մանէթին ամսական առնում էր 50 կոպէկ, ուրեմն, 50 մանէթին տարեկան 30 ռուբլի։ Անցեալ 87 թուի ամառը, զարմանալի բան, դեռ էլի Թագին այդ փողի դաւին քաշում էր Մուսինի հետ։ Գիւղական դատարանը, միանգամայն ականջ չդնելով Մուսինի խօսքերին, վճռեց, որ վերջինս 15 ռուբլի տալ Թագագիւլ խանումին ու այնպէս վերջացնէ։ Ահա այսպիսի և աւելի վատթար փաստեր ինձ զգուացրել ու վերին աստիճանի զայրացրել էին անարդարութիւն գործողների դէմ, այդ պատճառով Եգանանց Մուսինի գանգատը չէր կարող չըրաւել իմ ուշադրութիւնը, որպէս մի փաստ, մի դէպք, որ բանալու էր իմ առաջ շինական դատարանի բարոյական աշխարհը։ Բաց մի քանի խօսք ասենք Մուսինի և Եփրեմի մասին։

II

Մուսին (Մովսէս) «Խաչաւորի» տղան էր։ Լալի գիւղացի Եգանանց խաչաւոր Վրրդանանը, ինչպէս նրան անուանում էին գիւղացիները, Դարսի և Դաղստանի պատերազմներում եղած՝ Գէորգեան շքանշանի գրող աստիճանն ստացած՝ իւր անձը եթիմի, եսիրի ուղուրին դրած՝ մի ռաշիտ, Լիսամի սրտի տէր տղամարդ էր։ Նա Աշուղի գիւղի Ձորիվարում մի լուսնեակ աշնանային գիշեր չընըզանդանց նամարդ Ուհանի հետ մի խումբ աւագակների առաջ կտրեց ու այնտեղ էլ իւր գլուխը դրեց։ Դորմաճիկ Խաչաւորն աղ ու հացով մարդ էլ էր. նրա դրանը երկնքի թռչունն էլ էր կերակրում։ Խեղճն իւր մահից յետ թողեց Մուսինին ու Մուքէլին (Միքայէլ)։ Վերջինիս ծալը մի քիչ պակաս էր։ Խաչաւորի կին լուրջին նոյնպէս մի չիմար կին էր. մենակ Մուսին էր Խաչաւորի կողմը քաշել. բաց մի բան կար, Խաչաւորը մեռնելիս հարստութիւն չթողեց՝ այնպէս որ քիչ ժամանակից յետոյ Մուսին ընկաւ գիւղի ամենայետին քեասիբների շարքը։ Գիւղի քեասիբն էլ, Աստուած ինքը հեռու տանէ, երբէք ոտի չի կանգնիլ, պատճառ, խեղճը հենց մի քիչ ուզում է ժպտալ,

գլուխը բարձրացնել՝ գազան գիւղացիները տա-  
լիս՝ նստացնում են: Եփրեմը շատուոր և հա-  
րուստ տան տղայ էր: Չատուորութիւնը գիւ-  
ղում անցն նշանակութիւնն ունի, ինչ նշանա-  
կութիւն—կապիտալն առևտրական աշխար-  
հում. դեռ էլի աւելի: Այդ աւելի երևում է,  
գիւղացիների լեզուով ասած, քեօ մ ա կ չ ու  
թ ա ն մ է ջ: (Երբ շատուոր ենք ասում՝ պիտի  
իմանալ գիւղական անցալիսի գերդաստուն, որի  
անդամները մեծ մասամբ տղամարդիկ են):  
Օրինակ՝ եթէ կռիւ է ծագում շատուորի և մի-  
այնակի մէջ, այդ ժամանակ վաչը տարել է  
վերջինին, նրան շատուորի ազգականներն այգի  
ընկած շան պէս այնքան թակում են, մինչ,  
գիւղացիների լեզուով ասած, թան ճամելուց  
ձգում են: Իեռ այս բոպէլիս էլ Ղազախի գա-  
ւառի շատ գիւղերում թագաւորում է, այսպէս  
ասած, բռնցալին իրաւունքը: Եփրեմի հայրը  
Քաղիւրանց Գիգին (Կիրակոս) էր: Ղորմածիկը  
մի կողքը հաստ մարդ էր: Քաղիւրանք առաջ  
շատ աղքատ էին. նրանց ամբողջ հարստու-  
թիւնը կայանում էր մի պոչատ և քաֆթառ  
գօձի մէջ: Վերջին ժամանակները Գիգինին  
էլ տարան Դաղստանի պատերազմ: Ասում են  
այնտեղ Գիգին մի լէզգի պառաւի տուն է մըտ-  
նում, ուր քաջութիւնն ուզում է փորձել այդ

խեղճ պառաւի վրայ, սակայն վերջինս, որպէս  
փրկանք իւր անձի, առաջարկում է Գիգինին  
իւր հոգեպահուստը: Գիգինի բաղդից Չամիլն  
էլ շուտով գերի է ընկնում: Վերադառնալով  
Լալի գիւղը՝ մեր Գիգին սկսում է շահացնել  
իւր բերած փողերը: Մանէթին մանէթ ստա-  
նալով՝ Քաղիւրի տղան տուն ու տեղ է սար-  
քում, սկսում է մարդի շարք ընկնել, այնպէս  
որ Քաղիւրանց պէս հարուստ Լալի գիւղում այ-  
սօր ոչ ոք չկայ: Իսկ Եգանանց Մոսսին: Մու-  
սին լինելով յետին աղքատներից մինը՝ բան  
չունէր. նրա ամբողջ հարստութիւնը բաղկա-  
ցած էր՝ մի այգուց, մի աչառից—եզնացուից,  
մի մերոնից—մաչր խողից, մի քանի հաւերից,  
մի կնոջից և երեք տղայ երեխաներից:

Նա արքունական հարկն իւր այգու բեր-  
քովն էր տալիս: Սակայն այգին գիւղում ան-  
տէր չի կարելի թողնել, այլ պիտի գիշեր-ցերեկ  
աչքով պահել նրան, որպէս զի նրա խաղողը  
չգողանան: Պէտք է այս էլ ասել, որ խաղողի  
գողը սովորաբար հարուստ տան տղաներն են  
լինում, ըստ որում՝ աղքատ տան երեխաները  
վախենում են գողութեան ժամանակ բռնուիլն և  
իրենց գանազան պատիժներից ազատող չլինի:  
Այդպիսով Մոսսինի այգին ցերեկը նրա կին  
Մարգարիտն էր պահում՝ նստած լինելով այ-

գու դէմ ու դէմ մի դիմաց տեղ, իսկ գիշերներն—ինքը տանջուած, աղցան դարձած Մուսին: Հեշտ բան չէ՝ առաւօտեան ժամը 4-ից սկսած մինչև երեկոյեան ժամը 8-ը՝ արեգակի կիզիչ ճառագայթների տակ ուրիշի համար հունձ անել, իսկ երեկոյեան գալ ու աչգի պահել: Դա նշանակում է ամբողջ 24 ժամ չքնել, դա նշանակում է միշտ ֆիզիքապէս աշխատել, բաց կարող է միշտ աչգպէս լինել: Ի հարկէ ոչ: Ահա աչգպիսի դէպքերից օգուտ քաղելով՝ գիւղի փչացած երեխաները մտնում են աղքատների աչգիներն ու քարուքանդ անում նրանց, այնպէս որ՝ վերջ ՚ի վերջոյ քեասիբի համար ոչ միայն վաճառելու, այլ ուտելու անգամ խաղող չէ մնում: Պարզ է, ուրեմն, որ Մուսինի ուրախութեանը չափ չպիտի լինէր, քանի որ նրան աջողուել էր, վերջապէս, իւր աչգին քանդողին գտնել: Մուսին այս անգամ լիաջոյս էր, որ քեօխվէն (տանուտէր) իւր բոլոր վնասներն առնելու է Բաղիրանցից. նա իրաւամբ կասկածելու տեղիք անգամ չունէր, որովհետև գողութիւնը հաստատուած էր անհերքելի փաստերով. մնում էր միայն գողին պատժել տալ:

### III

Երբ Մուսին Եփրեմին մօտեցրեց մեզ՝ նըս-

տոտած գիւղացիներից սկսեցին նրան զանազան հարցեր առաջարկել: Ստեփան քեօխվէն, որի կալուտորն էր Մուսին, ճաղրական կերպով դարձաւ դէպի նա.

—Աչգ հրդեան ես բերում ուստայ Եփրեմին ա՛ Մուս:

—Մեր բաղից՝ ուրիշ հրդեան դեմ բերիւ. հու իրենց տանից չեմ դուրս քաշել»:

—Յիմար գլուխդ թաղեմ, ասաց գիւղացիներից մինը, նայելով մի կողմից Եփրեմին, միւս կողմից իւր մօտ նստած գիւղացիների վրայ, մի ասող լի թէ՛ ա՛ չիմար, չէ՛իր կարող Բաղալի աչգու կողմից մտնի, չէ՛իր իմանում, որ Մուսին ճանապարհի կողմէն կլի:

— Հա, հա, էլ մի ասիլ. հարամ լի դրա կերածը. կնկատէր մարդ՝ ամօթ չի քաշել՝ բռնուել ա... Եւ աչգպէս, մի գիւղացի անգամ չգտնուեց, որ նախատէր Եփրեմին: Գիւղացիք բոլորովին ուրիշ լեզուով կը խօսէին ՚ի հարկէ, եթէ բռնուողը մի աղքատ տղայ լինէր: Չատ անգամ, օրինակ, պատահել են շապիսի դէպքեր. հարուստ և քեասիբ տղան, միասին ընկերացած, գնացել են գողութիւն արել: Գողութիւնը բացուել է: Բաց միայն աղքատ ընկերն է պատժուել: Տեսէք այժմ բանն ինչ տեղն է: Մուսին լաց է լինում, որ իւր որդկերանց ապրուս-



տը կտրել է Յփրեմը, իսկ չիմար, կեղծաւոր և անխղճմտանք գիւղացիները ցաւակցութիւն են յայտնում անցն մասին, որ Յփրեմը իրեն բռնել է տուել: Ասացինք, որ վաղ առաւօտ էր: Կալերը դեռ նոր էին գցում: Բաղիրանց կալը գիւղամիջից դուրս՝ մի բարձր տեղ էր. տանրցիք բոլորն էլ իրենց կալումն էին: Համբաւը հասաւ նրանց, որ Յփրեմին, որպէս այդու գողի, գիւղամէջ են բերել. նոյն իսկ կալից էլ կարող էին տեսնել Յփրեմին, եթէ նայէին: Յփրեմի հօրեղբայր Պեպանը (Ստեփան) բան ընկաւ, այսինքն՝ սկսեց ինքն իրեն բարկացած խօսել:

Գիւղամիջից կարելի էր լսել նրա խօսքերը, նամանաւանդ որ բաւականին բարձր ձայնով էր խօսում:

— Գլուխդ թնկեմ. (Յփրեմի համար է ասում) շատ լաւ ա արել եզանանց Մուսին, որ տուել ա, գլուխը ճղել, սպանած յտէր. կընկատէր մարդ՝ անօթ չէր նրան, որ բռնուէց: Ամենեւին ազատելու չեմ. թողնելու եմ քեօխվէն կաշին պուկի. դա մեր կողմը չի քաշել... և այլն և այլն: Իսկ Մուսինի հասցէին նա ուղղեց հետեւեալ խօսքերը.

— Դու եզանանց տկլոր Մուսինին ասա. մի ասող լի թէ՛ ան տկլոր, էդ հու անլի փուշի

չունես, թէ գնտի տակովը տաս հաց թխելիս. գու ձնց սիրտ արիր Բաղիրի թոռանը գիւղամէջ բերիր. բա չես իմանում ում հետ բան ունես. սըտի... թէ մանէթով չեմ գլուխդ ճղիլ: Համա կը տանես հա... դէ տէնանք, էլի... և այլն և այլն... Խեղճ Մուսին մնացել էր խըլլըշկոտելիս: Անճարացած՝ նա դարձաւ Ստեփան քեօխվին \*):

— Ա քեօխվայ, բա ի՞նչ անենք, մի ասա է...

— Ի՞նչ ղեմ ասիլ, ա բալա, գնա ուզուն-թալա քեօխվին յայտնի:

#### IV

Առաւօտեան վաղ Մուսին ճանապարհ ընկաւ դէպի Ուզունթալա: Ուզունթալան Լալի գիւղի հետ մի շինական կառավարութիւն կազմելով, նրանից չորս վերստ հեռաւորութեան վրայ է գտնուում դէպի հարաւ-արեւմուտք: Նա Լալի գիւղից շատ բազմամարդ է, այդ պատտառով էլ, յայտնի օրինաց հիման վրայ, քեօխվէն միշտ այդ տեղից է ընտրուում: Զարժուած Մուսինին օգնութիւն հասցնելու ցանկութիւ-

\*) Ստեփան քեօխվէն առաջուայ ժամանակներում քեօխվութիւն արած մարդ էր. միայն պատուելու համար էին նրան քեօխվայ ասում այժմ:

նից՝ ես էլ ճանապարհ ընկաչ գէպի Ուզունթա-  
լա: Ճանապարհին իմ ու Մուսինի խօսակցու-  
թեան նիւթը գլխաւորապէս Յփրեմի գողու-  
թիւնն էր: Ուրախացած նրանով, որ Մուսինին  
աջողուեց վերջապէս իւր այգու գողը բռնել և  
նրանով, որ քեօխովէն անշուշտ պատժելու է  
յանցաւորին ինչպէս հարկն է, սկսեցի մանրա-  
մասը հարցմունքներ անել Յփրեմին բռնելու  
մասին: Նա ինձ եղածն իսկութեամբ պատմեց:  
— Երեկոյեան որ տուն եկաչ, սկսեց պատմել  
Մուսին, մեր խնկանն ասաց, որ Յփրեմը կալի  
եզները բաղերի գլխի վրայ քշեց. նա հաւա-  
տացրեց ինձ, որ Յփրեմն առանց մեր բաղը  
մտնելու դիմանալու չի և թէ ինձ հարկաւոր  
է այդ գիշեր անքուն մնալ: Թէպէտ ջարդուած  
էի, բայց ինչ արած. վճռեցի այդ գիշեր ամե-  
նեւին չքնել: Միրտս վկայեց, որ Յփրեմը ճա-  
նապարհի կողմից դի մեր բաղը մտնել, այդ  
պատճառով էլ գնացի և թեք ընկաչ չափարից  
մօտ՝ թթենիների տակ: Մի քիչ-միչ աչքս կրպ-  
ցրել էի թէ չէ, յանկարծ մի ճրոճը ող լսեցի:  
Կամաց գլուխս բարձրացրի՝ տեսաչ մի մարդ,  
ոտի մինը չափարի վրայ դրած՝ ականջ է դը-  
նում: Ինքն էլ մի շատ լուսնեակ գիշեր էր:  
Հանդարտ շուաքք քաշուեցի, որ չք տեսնուեմ:  
Այդ ժամանակ մի խօսողի ձայն դիպաւ ականջիս:

— Ա՛, ինչո՞ւ ես կանգնել, թուի բաղն ըն-  
կի էլի, ասաց մինը ճանապարհից:

— Ո՞նց թուչեմ, վաչ թէ Մուսին բաղում  
ըլի... պատասխանեց վրայինը:

— Վաչ է, բանդ կտրուի: Մուսին ո՞վ ա  
իմանում, ջարդուած մարդ, հիմի ո՞ր վազան  
տակին ա շնթուած...:

— Ա՛, Աստօծ վկայ, ոտներս լըք-լըքըմ  
են, կը տենաս, գլուխս բան ա գալու, պատաս-  
խանեց չափարի վրայինը:

— Այդ ինչ վախուկ ես, դէսը կաց, ես  
եմ մտնում... պատասխանեց ճանապարհում  
կանգնածը: Աչս խօսքերը կարծես ամաչացրին  
չափարի վրայինին, և նա թուաւ, բաղն ընկաւ:  
Ես ինձ զգուշութեամբ հաւաքեցի, որ ամենեւին  
չնկատուեմ: Բանից երևաց, որ նրանք երկու էին.  
բայց չիմացաչ թէ աչն միւս ընկերն ո՞վ էր:

— Միթէ իրար անուն չէին տալիս, հար-  
ցրի ես:

— Գողութեան ժամանակ իրար անուն  
չեն տալ, պատասխանեց Մուսին. եթէ տան  
էլ՝ կեղծ անուններ կը տան, աւելացրեց նա:

— Յետոչ ինչ.— Որ թուաւ բաղն ընկաւ, մի  
քիչ կանգնեց և ականջ դրեց. երբ որ տեսաւ  
ձայն-ձուն չկաչ, կամաց առաչ գնաց դէպի  
վաղները: Նայեցի տեսաչ այդ գնացողի ձեռին

մի չուխաց կայ: Չուխի յետը կնպած էր, խնդողը քնդում էր, չուխէն անում: Հենց մի քանի ճիթ (ողկոց) չուխէն էր գցել թէ չէ, տեղիցս վեր կացայ: Չափարի մօտ՝ ճանապարհում կանգնածն իմ դրնթուն տեսաւ. այդ ժամանակ նա շվկացրեց. երևի այդ նշանն էր, որովհետև շվոցի վրայ բողի ընկերը վագեց իսկոյն դէպի չափարը, որ եկած տեղով դուրս փախչի: Բայց որտեղ. անաջը կտրեցի և ձեռիս եղանը որ վրայ բերի նրա ականջնախառք, տեսայ առաջիս փռուեց. այնուհետև ձեռիս էր:

— Իսկ այն միւս ընկերը, հարցրի ես:

— Փախաւ, պատասխանեց Մուսին ծիծաղելով:

Այսպէս գրոց անելով մենք շուտով հասանք Աւզունթալա: Հասնելով քեօխվի տունը՝ տեսանք նա ձին թամբում է, որ ուրիշ տեղ գնայ: Իմ ներկայութեամբ Մուսին մանրամասը պատմեց եղածը: Քեօխվէն սաստիկ զայրացաւ Եփրեմի վրայ:

— Զատ լաւ, ասաց նա, դու գնա՛ ձեր տունը՝ այդ չուխէն էլ հետդ տար և մօտդ պահիր. ես էգուց մի դիւան անեմ, որ անխարհս թամաշաց գայ: Քոռ Բաղիրի թուր հիմի էլ սկսել ա քեասիր-բիւսիբի բնդերը քանդել, գայրացած խօսում էր քեօխվէն: Լաւ ա՛ Մուս, շարունակեց նա, դու գնա, ես էգուց

անպատճառ կը գամ ձեր գիւղը. այդ ժամանակ կը տեսնես, թէ ինչ կը բերեմ Բաղիրի թոռան գլուխը...

Զատ ուրախացայ ես քեօխվի այդպիսի պատասխանի վրայ: Ես ու Մուսին իսկոյն վերադարձանք:

V

Այդ ժամանակուայ քեօխվէն Ազատանց Ստեփանն էր: Դա յայտնի էր գիւղում իւր արհեստի անունով. նրան դալլաք Ստեփան էին ասում: Դալլաք Ստեփանը մի տկոր մարդ էր. նա քեօխվայ դառնալով, ինչպէս երևում էր, միտք ունէր միայն իրեն զրստել: Դալլաք Ստեփանը յայտնի էր իւր վերին աստիճանի կաշառակերութեամբ: Նա, սոված շան պէս, միշտ ոսկրի էր ման գալիս, որ կրճի: Երբ որ այդ պարոնից հարցնում էին՝ թէ ինչո՞ւ այդչափ կաշառակերութիւն է անում, նա միշտ լակոնական պատասխան էր տալիս. «Բա հու իմ մօր ծիծը չեմ ձձելու»: Մուսին համ հաւատում էր քեօխվի ասածներին, համ էլ սաստիկ կասկածում:

— Այդ շան տղի ըռելը դու կը տենաս, Բաղիրի տղերքը բան են գցելու, և բանն ուրիշ տեսակ ա շուռ գալու, Արշակ, — ասում էր նա ինձ վշտագին ձայնով:

4591

—Վախիլ մի, Մուսի ապի, այդպէս չի կարող լինել, հանգստացնում էի նրան. — քեօխվէն կաշառ վերցնելու դուռը չունի:

—Է՛ է, Արշակ ջան, դու մեր գիւղի բաները չես իմանալ. մեզանում օրէնք չկայ. մենք որ կանք՝ քոյի տակի խալիս ենք. մեզանում ով ոչո՛ւ ունի՝ բանը նրանն է. ի՛նչ ես կորցրել՝ ինչի՛ ես ման գալի: Մեր քեօխվէն ինձանից վատթար մի տկոր՝ լպուզ մարդ է՝ ոչ խղճմտանք ունի, ոչ ամօթ. մի շահու համար իւր որդուն կը մորթի՝ ի՛նչ ես ասում դու, — խօսում էր Մուսին, ճակատի քրտինքը սրբելով:

—Այ մարդ, ի՛նչ ես երեխայ-երեխայ խօսում, քեզ ասում եմ, որ քեօխվէն չէ կարող կաշառք վերցնել. միթէ ես վկայ չեմ նրա ասած խօսքերին, հանգստացնում էի Մուսինին, բայց իզո՛ւր, նա չէր հաւատում:

—Թ՛ուրքին մի առակ ունի, պատասխանեց Մուսին. ասում է՝ «այք, ինչից ես վախենում — թէ՛ տեսածից»: Հիմի իմը չի, շարունակեց նա: Ես իմ աչքի տեսածիցն եմ վախում, բա՛նա: Մի տարի էլի այդ Բաղիրանց ապրանքն իմ Ա՛ղի Ենի արտն էր ընկել, բերի տուն արի, և ամենքն էլ տեսան, որ գնացի Բաղիրանց ապրանքը՝ մեր արտից դուրս արի, բե՛-

րի: Այդ ժամանակուայ քեօխվէն էլի Չամուրի տղան էր (դալլաք Ստեփանը Չամուրի տղայ անուևով էլ է յայտնի): Գնացի նրան գանգատ արի. էլի այդպէս խոստացաւ, բայց ի՛նչ դուրս եկաւ բանից: Քեօխվէն, փոխանակ իմ վնասն առնելու՝ ինձ տալու, հրամայեց, որ երկու օր ձրի հունձ անեմ Բաղիրի տղի համար:

—Այդ ի՛նչ ես անում, այ մարդ, զարմացմամբ հարցրի ես:

—Բա ի՛նչ ես իմանում...

—Ճշմարիտ ես ասում:

—Սուտ ասելու ի՛նչ ունեմ, խնայթ հու չես տալու ինձ, պատասխանեց Մուսին, անխառնելով: Այդտեղ ես էլ սկսեցի կասկածել. բայց մի փոքր լուրթիւնից յետ իսկոյն պատասխանիցի.

—Մուսի ապի, ճշմարտն եմ ասում քեզ՝ եթէ Չամուրի տղան այդպէս բան բունի, չգիտեմ, թէ ի՛նչ կանեմ նրան, վրդովուած պատասխանեցի ես:

—Ի՛նչ ՚դես անիլ նրան, քե մտտաղ, նա որ կայ, մեր գիւղի դուբերնատն ա, նա ոչ ոքից չի վախում:

—Ի՛նչ ես երեխայ-երեխայ դուրս տալիս, սոված դալլաքը ո՛րտեղի դուբերնատօրն է. ես նրան գուբերնատօր ցոյց կը տամ, ապա մի

ճշմարիտ դատաստան չկորէ, պատասխանեցի ես:

— Է՛հ, քե մնտաղ, դէնա ճնտղ դատարկ չմնալու համար խօսում ես էլի, պատասխանեց Մուսին, յուսահատական հայեացք ձգելով վրաս: Այդ ինձ աւելի բարկացրեց:

— Դու ինձ չես հաւատում, Մուսի ապի, բացականչեցի ես:

— Է՛հ, տենանք ի՛նչ ՚դես անիլ՝ ժամանակը շատ էլ հեռու չի, վաղն ա:

— Բաց ասա ինձ, Մուսի ապի, էլի՛ ի՛նչ պատճառով հրամայեց քեօխվէն, որ դու ի վուր տեղից երկու օր հունձ անես Բաղիրի տըղի համար:

— Ես ի՛նչ գիտեմ, ասում էր, իբր թէ գիտմամբ եմ Բաղիրի տղի անպանքն իմ արտն արել: Է՛հ քեօխվաց ա, ի՛նչ ասում ա, սնգում ա էլի, անխ քաշելով աւելացրեց Մուսին:

## VI

Առաւօտը կիրակի էր. չեմ չիշում մեր գիւղում ո՞վ պատարագ ունէր. սեղանի վրայ սարկաւագութիւն էի անում: Այդ ժամանակ լսեցի, որ գիւղամիջում մի ալյանդակ աղմուկ բարձրացաւ: Ականջս ծինու էր. գիտէի, որ այդ օրը քեօխվէն գալու է: Մի փոքր ականջ դրի՝ տեսայ Մուսինի աղիողորմ ձայնն է:

— Ա, ինչի՛ ես խփում, իմ բաղի գողը հու ես չեմ, ինչի՛ ես խփում, բա Աստօժ չունէս, աղեկտուր ձայնով նախատում էր Մուսին իրեն թակողին: Իսկոյն հասկացայ, թէ ինչի՛ մէջ է բանի էութիւնը: Չանթահարի նման ժամաշապիկս մի կողմ ձգեցի ու դուրս թռայ: Ի՛նչ եմ տեսնում, տէր իմ Աստուած: Քեօխվէն Մուսինի մարմինը մաթրախով թակում է: Բարկութիւնից ձայնս կտրուեց. այ ևս չնայեցի՝ տուն վազիլն ու հօրս հրացանը ձեռս ձգիլը մին արի: Ես հենց դուրս եկայ գիւղամէջ՝ քեօխվէն ինձ տեսաւ. մինչ ուզում էի մօտենալ նրան, նա փախաւ: Դեռ այսօր էլ չեմ չիշում՝ թէ այն ո՞վ էր, որ ետեւիցս վազեց ու ինձ բռնեց. քեօխվէն միայն այդ մարդին էր պարտական: Այդպէսով Մուսին ազատուեց: Բաց ի՛նչ էր եկել խեղճողորմելի աղբատի զլուխը: Նա բարկութիւնից հեկեկում էր. ոչ ոք չկար նրա օգտին մի խօսք անգամ ասող. այդ հանգամանքը կրկնապատկում էր նրա բարկութիւնը. նա մղկտալով նաճում էր դէպի վերև և Աստուած էր կանչում, բաց ո՞վ էր նրան լսողը, ամեն տեղ լուութիւն էր, միայն նրա հոգին էր վրդովուած. գործուած անարդարութիւնը խեղդում էր նրան: Օտտեցայ նրան: Ամառուայ շոք օր էր: Մուսին միայն շապկանց էր: Անիրաւ քեօխվէն հենց

շապկի վրայից էր թակել նրան: Ել ոչ երես, ոչ չոնք և ոչ աչք էր ասել անողորմը. նա Մուսինի ամբողջ մարմինը կապտացրել՝ արիւնթաթալս էր արել, շապկիը վրան պատռտորել էր մաթրախով:

Քաջ ինչն աւելի վրդովեց ինձ՝—կանգնած գիւղացիների վերին աստիճանի անտարբերութիւնը: Որքան ես նկատել եմ, գիւղացիները սիրում են քստմնեցուցիչ տեսարաններ: Ինչպէս սպանացին անվրդով նայում է եզան գոհին, այնպէս էլ գիւղացին իւր ընկերոջ տանջանքներին: Մինչև իսկ գտնուեցին այնպիսի գիւղացիներ, որոնք թողած Մուսինի ջանի կսկիձը, սկսեցին մի առանձին գարմանքով լսօսել քեօխվի զոչարութեան, նրա դաբթութեան՝ կտրչութեան վրայ: Մի քանի ըրպէից յետ նըրանք ճիծաղելով իրար պատմում էին, թէ ինչպէս քեօխվի թակելու ժամանակ Մուսին քուցին—քուցին էր անում \*): Մուսինի՝ այդ հասակաւոր աղքատ գիւղացու լացը, նրա մարդկային արժանաւորութեան ոտնակոխ լինելը ամենեւին նրանց չէր շարժում, ոչխար գիւղացին թամաշի էր ման գալիս՝ այն էլ կար. ինչ նրա բանն էր դատելը, ինչ նրա բանն էր վըր-

\*) Ուսերը բարձր ու քաշի էր տալիս:

դովուելը: Գիւղացու փորը կշտացրու՝ այնուհետև թէկուզ գլուխը թակիր:

## VII

Քաջ ինչի՞ թակուեց Մուսին. ու՛մ տունն էր քանդել նա, ինչ էր նրա յանցանքը: Ահա թէ բանն ինչպէս է լինում: Քաղիւրի տղայ Պեպանը լսելով, որ ես ու Մուսին Ուզունթալա ենք գնացել քեօխվին գանգատ անելու՝ ինքն էլ իւր կողմից մեզանից յետոյ պատրաստում է գնալ, մեր գիւղացիների լեզուով ասած, <ըռէլը ցխելու>: Յխելու համար, ՚ի հարկէ, նա պիտի քեօխվին տեսնէր: Այդ վերջի բառը գրականական լեզուով նշանակում է՝ քեօխվին կաշառել: Այդպէս էլ անում է մեր Պեպանը: Չամուրի տղին կաշառելն ինչ, նրա ջանն էր մի շիշ օղի և երկու կամ երեք ըուբլի: Այնուհետև մեր դալլաքը պատրաստ էր թէկուզ իւր հօրը գերեզմանից հանելու: Կաշառուած քեօխվէն դալլա է մեր գիւղն ու Քաղիւրի տղի դրանը ցած գալիս. դա արդէն ինքն ըստ ինքեան վատ նշան էր: Քաղիւրի տղի կալումն՝ առանց գիւղամէջ գալու, առանց սրանից—նրանից մի բան հարցնելու, առանց Մուսինի ձայնը լսելու, գոյ Յփրեմի հօրեղբայր Պեպանի թելադրութեամբ, վճռում է հետևեա-

լր.— Վրովհետև Մուսին իւր բաղումը Յփրեմին բռնելիս՝ տուել ա եղանով նրա գլուխը ճղել, որով և պատճառ ա դարձել այս ամառուայ բանի-գործի ժամանակ Յփրեմի հիւանդ պառկելուն, ուստի ես՝ Ուզունթալու քեօխվայ Ստեփան Ագատեանցս, վճռեցի՝ 1) որ Եզանանց Մուսին Յփրեմին կերակրի՝ նրա բոլոր հիւանդութեան ժամանակ. 2) Յփրեմի բժշկութեան համար ինչքան ծախս լի՝ տայ. 3) շինական դատարանին 10 ըուբլի տուգանք տայ և 4) Բաղիրի տղի համար այնքան ժամանակ բան անի, որքան ժամանակ Յփրեմը հիւանդ կը լի: Բայց Եզանանց Մուսին մի տկոր մարդ ա և չի կարող նաղդ փողով այդ բոլոր ծախսերը քաշել, ասած է վճռի մէջ, ուստի հրամայեցի իմ օգնականին՝ որ գնաց, Մուսինի աչառը խլի և ծախի, ու նրանից գոչացած փողն ինձ յանձնի: Աղբի տակին պառկած ու աչքը չալ հաւի ձագին ձգած աղուէսի պէս՝ դու մի ասիլ, Չամուրի տղի աչքն էլ Մուսինի աչառի վրայ է եղել:

### VIII

Ծախել Մուսինի աչառը, գրկել Մուսինին իւր եղբորից՝ միակ եղնացուից, նշանակում է այդ քեասիբի մի ձեռը կտրել: Թէկուզ հենց մի հատ աչառը գիւղացու համար մեծ

նշանակութիւն ունի: Այդպիսի աղքատն իւր մի հատ եզն ընկերացնում է ուրիշ իւր նման մի գիւղացու նոյնպէս մի հատ եզան հետ, և այդպիսով ստացւում է մի լուծ եզը, որ հերթով բան է անում՝ երկու ընկերացած գիւղացիների համար: Այդ մի լծնով նրանք վարում են իրենց տափը, անտառից փայտ են կրում, ջրաղացն աղում են տանում և թէ պատահում է, քրեհ էլ են վերցնում. այդպիսով կարողանում են մի քանի շահի վաստակել իրենց սև օրին, իրենց պակասութեան դարման անել: Ասել է թէ՛ Մուսինի եղնացուն խլելով՝ Չամուրի տղան մեռցնում էր նրան, և այն էլ՝ յանուն իւր գրպանի... Այդ անում էր նա օրը ձաշին գիւղամիջում՝ մարդկանց, երեխաների, կանանց առաջ: Կաշառը նրան հրէշ էր շինել: Օգուտ քաղելով գիւղացիների անասնութիւնից՝ ամօթն ու երկիւղը մի կոմը դրած, քեօխվէն գործում էր մի բարբարոսութիւն, որ կարող էր իւր հետեանքներով մի ամբողջ գիւղական սերունդ փչացնել: Նրան հալածող չկար, որովհետև պակաս էր գիտակցութիւնը ներկայ եղողների մէջ: Քեօխվէն հրամայում է ի կատար ածել իւր հրամանը: Այդ նպատակով երկու տղայ է ուղարկում՝ որ գնան տաւարից Մուսինի աչառը բերեն: Աչառը բերում է.

բայց զիւղը մտցնելու ժամանակ Մուսինի կի-  
նը, որ առաջին անգամն է տեսնում, ճվալով,  
ճչալով, իւր մազերը պոկելով, տափին տալով և  
դէպի երկինք անէծքներ ուղարկելով վազում է  
դէպի բերողները: Վշտահար գեղջկուհին կըպ-  
չում է բերողների մէկից, միւսից, բայց նրանք  
հրելով խեղճ կնոջը բաց են նետում. նա կըր-  
կին մօտենում է, բայց ի գո՛ր: Անճարացած  
գեղջկուհին սկսում է իւր ձեռում մեծացրած  
աչառի հետ խօսել.

— Խնձոր ջան, այդ ուր են տանում քեզ,  
միթէ բերանիս պատառը քեզ հետ էնդուր հա-  
մար եմ կիսել, որ դու վերջը Բաղիրի տղի կա-  
լումը լծուես... Վնչ, Աստօծ ջան, դէ լսի, էլի.  
բա էլ ո՞ր օրէն ես պահում քո գատաստանը.  
բա տեսնում չե՞ս ի՞նչ են անում: Քո տունն  
Աստօծ քանդի, Չամուրի տղայ, ոնց որ դու  
իմը քանդում ես. Աստուածանից խնդրել եմ՝  
քո կնիկն էլ իմ օրը ընկնի...

— Ա՛ լաչառ (անզգամ), դէնը կորի՛ քիչ  
ժանգու ժէն արա. մենք ի՞նչ անենք, քեօխ-  
վէն ա հրամայել, պատասխանում են բե-  
րողները:

Այդ ժամանակ վրայ է հասնում քեօխ-  
վի օգնականը՝ Կեալին. գա խփում է մաթրա-  
խով կնոջն ու նրա ջանը մղկտացնում: Կինը

վաչր է ընկնում ու վնչ, վնչ անում: Նրա փոք-  
րիկ երեխաները, տեսնելով իրենց մօր վաչր  
ընկնելը, մօտենում են ու փաթաթւում նրա-  
նով: Մանուկները ճիչ, աղաղակ են բարձրա-  
ցնում: Մայրը մոռանալով իւր ցաւերը, սկսում  
է իւր երեխաներին մխիթարել.

— Լաց մի լիլ, Հանէս ջան, լաց մի լիլ,  
բալա ջան:

Մուսին այդ ժամանակ Ստեփանանց կա-  
լը քամելիս է լինում շապկանց. նա վազում է  
ոտն անել իւր աչառը, չթողնել, որ տանեն.  
Նա արդէն խլելիս է լինում քեօխվի օգնակա-  
նից: Ահա այդ ժամանակ օգնութեան է գալիս  
ինքը—քեօխվէն մաթրախը ձեռին: Սրանից  
չետ թէ ի՞նչ է պատահում, արդէն չայտնի է  
ընթերցողին: Մուսինի հետ այդ բարբարոսու-  
թիւնը պատահելու ժամանակ, Ղազարում հաշ-  
տարար գատաւոր էր ղարբաղցի հաջ՝ Ներսէս  
բէգ Աթաբէգեանը: Ամենքին չայտնի էր Աթա-  
բէգեանցի արդարադատութիւնը: Մուսինի հա-  
մար մի խնդիր գրեցի և համոզեցի նրան, որ  
անպատճառ զնայ ու Աթաբէգեանի առաջ իւր  
կապտած լաշը բաց անի. բայց ափսոս, ես իմ  
նպատակին չհասայ: Օգոստոս ամսից երկու օր  
էր մնացել, և ես անպատճառ պիտի Թիֆլիս  
գնալի: Այնպէս պատահեց՝ որ Մուսինին Դիլի-



ջան գանգատի ուղարկեցի, իսկ ես ճանապարհ  
ընկաչ դէպի Թիֆլիս:

### IX

Արանքից երկու ամիս անցած, մի օր Մուսինին պատահում եմ Թիֆլիս: Մուսինին առաջի Թիֆլիս գալն էր. նա արդէն 35 տարեկան տղամարդ էր: Միմեանց վզով փաթաթուցեցանք, իրար համբուրեցինք:

— Մուսի ապի, դու ո՞վ, Թիֆլիսն ո՞վ. աչս վարի, ցանքի ժամանակ ի՞նչ ես շինում աչստեղ, հարցրի ես զարմացմամբ:

— Վարուցանքն ինչո՞վ պիտի անէի, քե մատաղ, մի եզն ունէի, աչն էլ Չամուրի տղէն խլեց՝ Քոռ Բագիրի տղին տուեց:

— Հա, մոռացաչ հարցնելու, վրաչ բերի ես, գանգատուեցիր՝ թէ ոչ:

— Ո՞րտեղից գանգատուեցի. գնացի Քարվանսարա, աչնտեղ ասացին, որ հաշտարար դատաւորը շուտով ցած է գալու Դաղքեսասաման և թէ Դիլիջան աչ ևս գանգատ չէ վերցնում:

— Յետոչ, շտապով հարցրի ես:

— Յետոչ ի՞նչ:

— Չը գնացիր, գանգատ չարիր:

— Գնացի, բաց դատարկ:

— Ինչի՞:

— Դիւանխանում ասացին ինձ, պատաս-

խանեց Մուսին, որ գանգատս հաշտարար դատաւորը չի վերցնիլ, որովհետև քեօխվի հետ գործ ունեմ և թէ պէտք է Գեանջա գնամ՝ գուբեռնատին գանգատուելու. դէ ես էլ, քեասիբ մարդ, քե մատաղ, էն ուր գնացողն էի. անճարացած՝ տակը տակին թողի, գլուխը՝ գլուխին: Աչնուհետև Արշակ ջան, իմ վաթանն (հաչրենիբը) ինձ վատ թուաց՝ ամեն բան թողի, գլուխս առաչ չոլերն ընկաչ. չուսատեղս դու էիր, քեզ մօտ եկաչ, որ գլխումս մի խելք դնես. հիմի դու ես զիտում, ինչ կ'անես՝ էն էլ կ'անեմ:

Ինձ մնում էր ափսոսալ միայն...

Ես ինքս մի աղքատ աշակերտ, ինչ պիտի անէի Մուսինին կլանող Թիֆլիսում: Մի փոքր մտածեցի, և չանկարձ միտս ընկաւ, որ մեր Ղազախից, հաչր ու որդի, երկու քահանայ կաչին Թիֆլիս, — Յովհաննէս և Գրիգոր քահանաները: Մուսինին տարաչ նրանց մօտ, որ մի բանի գնեն: Բարի մարդիկ էին հանգուցեալ քահանաները. սիրով ընդունեցին Մուսինին. նշանակեցին նրան ամսական եօթ ռուբլի, որ իրենց կառքի ձիաները թիմարէ, պահէ: Ուրախացած գնացի իմ բանին:

Սակաչն աչ ուրախութիւնը երկար չըտուեց: Մուսինն ինձ պատահած ժամանակ գո-

հուժիւն էր յայտնում իւր վիճակից, բայց նրա ուշքը միշտ չետ էր. նա միշտ չիշում էր իւր հանէսին: Մուսին ինձ ասում էր:

— Արշակ ջան, մարդու վաթանն ինչ քաղցր է եղել. մեր տունն ու տեղը միտս է ընկել. մնամ այստեղ մինչև մեճ պասը, տեսնեմ՝ կարող եմ մի լուծ եզնագին աշխատել ու այնպէս վերագառնալ հայրենիք:

Բայց, աւանդ, բարդն այլ էր վճուել նրա համար:

X

Մի երեկոյց Մուսինը մտնում է ձիանոցը՝ որ ձիաներին թիմարի և, իւր քոռ բաղդից, այնտեղ վրայ է հասնում մի տեսարանի: Կառապանն ու մի... տիկին այնտեղ են լինում... Տեսնելով Մուսինին և կասկածելով՝ մի գուցէ ձայնը հրապարակ դուրս գալ, սիրեկան ու սիրուհի, ընկնում են Մուսինի վրայ և կամենում են խեղդել նրան: Մուսինը զիւղացի ուժեղ մարդ, նրանց իւրաքանչիւրին մի մի պատով է տալիս ու դուրս գալիս. սակայն նա ոչ ոքին ոչինչ չէ ասում: Մի քանի օրից յետ ամեն բան հանդարտում է, ամեն բան ըստ երևութին, մոռացութեան է տրւում: Բայց... Մի օր մեր ուսումնարանի պահապանն ասաց, որ ինձ դրանը կանչող կա: Աւսուցչից ներողու-

թիւն խնդրելով դասատւից դուրս եկալ ու գնացի. և ձեռք եմ տեսնում՝— Մուսինին: Նա հազիւ էր ինձ հասել, նա արդէն ոտի վրայ մեռած էր:

— Այդ ինչ է պատահել քեզ, Մուսի ապի ջան, հարցրի ես:

— Չգիտեմ, քե մատաղ, այս առաւօտ փոքրիկ տիրուհին մի բաժակ թէյ տուեց և նրանից դէսը համ ճնկներս են փշրուել, չեմ կարողանում ոտիս վրայ կանգնել, համ էլ սիրտս է խառնում: Մեռնում եմ, Արշակ ջան, տես կարաս, շուտով ֆուրգուն վարձի և ինձ տուն ուղարկիր, քե մատաղ, ոսկրնիս չողմը չմնան, գնամ հանէսիս համբուրեմ:

— Մի բաժակ թէյը քեզ ոչինչ չէր կարող անել, եթէ նրա մէջ ուրիշ բան չլինէր, Մուսի ապի: Չլլի թէ դեղել են քեզ:

— Ես էլ եմ այդպէս կարծում:— Եւ Մուսինը պատմեց ձիանոցի անցքը: Հենց այդ տեղից կառք նստեցրի Մուսինին և տարայ Մաղը, որ այնտեղից ուղարկեմ. բայց ճանապարհին նա այնպէս վատացաւ, որ ես ստիպուեցայ կառքը քշել դէպի տէր-Յովհաննէսի տունը: Մինչև գիշերուայ ժամը 11-ը Մուսինի մօտ էի: Տէր-Յովհաննէսից խնդրեցի, որ բժիշկ հրաւիրէ. նա մարդ ուղարկեց բժշկի ետեւից, բայց բժիշկ չեկաւ: Մուսինի բերանից դեղին մաղձ էր թա-

փում. դրա վրայ մի փոքր հանգստացաւ. նա  
բացուեց մի փոքր և, կարծես, վտանգն անցած  
էր համարուում: Թողնելով Մուսինին այլտեղ՝  
վերադարձայ տուն: Տէր-Յովհաննէսը Խարփու-  
լի Թաղումն էր, իսկ ես՝ Չուղուրէթ. ուշ էր,  
պիտի վերադառնայի: Հեռանալով յոչս տուի  
Մուսինին, որ առաւօտեան կը գամ: Մուսին  
ասաց, որ այժմ լաւ է և թէ երկիւղ չկայ: Այդ  
բանն ինձ խաբեց: Միւս օրը ես գնացի ու-  
սումնարան և միայն ճաշից յետոյ կարողացայ  
Մուսինի մօտ գնալ, բայց այլ ևս նրան կեն-  
դանի չգտայ: Ահա թէ ինչ հասցրեց Մուսինին  
իւր գանգատը: Մուսինի մահից յետ նրա եր-  
կու տղան ծաղկին զոհ գնացին. մնաց նրա  
ջահիլ կինը մի մանուկ տղայով: Չկարողանալով  
անմարդ ապրել Լալի գիւղում՝ Մուսինի կինն  
ուրիշ մարդի գնաց՝ իւր հետ տանելով իւր  
միակ որդուն:

Մուսինի տան տեղն այսօր միայն բակ է  
մնացել. նրա այգու տեղը գիւղացիներն այսօր  
վար են անում. . . .



ԳԻՆՆ Է 7 ԿՈՊԷԿ

« Ազգային գրադարան



NL0242279

